https://doi.org/10.46991/hc.2025.si1.008

Scientific Significance of the Conference Dedicated to the 105th Anniversary of the Faculty of History: "Current Problems and Prospects for the Development of Armenian Studies"[1]

Mkhitar Gabrielyan
https://orcid.org/0009-0005-2698-6052
Dean of YSU Faculty of History, Associate Professor of the Chair of Archaeology and Ethnography, Ph.D
m.gabrielyan@ysu.am

Keywords - Yerevan State University, Faculty of History, 105th anniversary, anniversary conference, "History and Culture" journal, special issue, history, archaeology, ethnography/cultural anthropology, art history.

The Faculty of History at Yerevan State University, as one of the founding structures of this higher education institution, has a significant role in Armenia's scientific, educational, and public life. An international conference titled "Modern Issues and Development Prospects of Armenian Studies" was organized within the framework of the 105 th anniversary of the faculty. The conference addressed the interconnectedness of education and science, the necessity of modernizing educational programs, and the growing applied value of historiography. The conference featured approximately one hundred reports from various countries, encompassing fields such as history, archaeology, ethnography, and art history. Particular emphasis was made on the importance of interdisciplinary cooperation for the further development of Armenian Studies. A part of the reports is being published in a special issue of the "History and Culture" journal. Although the conference did not aim to provide comprehensive answers, it served as a valuable platform to highlight sectoral issues and shape the pathways for the development of Armenian Studies and education in the field of history.

Պատմության ֆակուլտետի 105-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական կարևորությունը. «Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները»

Մխիթար Գաբրիելյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

[1] Գիտաժողովի կազմակերպումը և ժողովածուի հրատարակությունը ֆինանսավորել են Երևանի պետական համալսարանը և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 8-12.
Received: 30.11.2024
Revised: 10.02.2025
Accepted: 18.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Հիմնաբառեր – Երևանի պետական համալսարան, պատմության ֆակուլտետ, 105-ամյակ, հոբելյանական գիտաժողով, «Պատմություն և մշակույթ» հանդես, հատուկ թողարկում, պատմություն, հնագիտություն, ազգաբանություն/մշակութային մարդաբանություն, արվեստաբանություն:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, լինելով Մայր բուհի հիմնադիր կառույցներից, կարևոր դեր է խաղացել Հայաստանի գիտական, կրթական և հասարակական կյանքում: 105-ամյակի շրջանակում կազմակերպվեց միջազգային գիտաժողով՝ «Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով: Գիտաժողովն անդրադարձավ կրթության ու գիտության փոխկապակցվածությանը, կրթական ծրագրերի արդիականացման անհրաժեշտությանը, պատմագիտության կիրառական արժեքի աճին: Ներկայացվեցին շուրջ հարյուր զեկուցումներ տարբեր երկրներից՝ ընդգրկելով պատմություն, հնագիտություն, ազգաբանություն, արվեստաբանություն և այլ ոլորտներ: Առանձնահատուկ շեշտ դրվեց միջգիտակարգային համագործակցության կարևորության վրա՝ հայագիտության հետագա զարգացման համար: Զեկուցումների մի մասը հրատարակվում է «Պատմություն և մշակույթ» հանդեսի հատուկ թողարկմամբ: Չնայած գիտաժողովն ամբողջական պատասխաններ տալու նպատակ չի հետապնդում, այն արժեքավոր հարթակ էր՝ վեր հանելու ոլորտային խնդիրները և ձևավորելու հայագիտության ու պատմագիտական կրթության զարգացման ուղիները:

Научное значение конференции, посвященной 105-летию факультета истории: «Актуальные проблемы и перспективы развития арменоведения»

Мхитар Габриелян
Декан исторического факультета ЕГУ, кафедра археологии и этнографии, доцент, к.и.н.

Ключевые слова - Ереванский государственный университет, факультет истории, 105-летие, юбилейная конференция, журнал «История и культура», специальный выпуск, история, археология, этнография/культурная антропология, искусствоведение.

Факультет истории Ереванского государственного университета, являясь одной из учредительных структур университета, играет важную роль в научной, образовательной и общественной жизни Армении. В рамках 105-летия факультета была организована международная конференция под названием «Современные проблемы и перспективы развития арменоведения». Конференция затронула взаимосвязь образования и науки, необходимость модернизации образовательных программ и рост прикладной ценности историографии. Было представлено около ста докладов из разных стран, охватывающих историю, археологию, этнографию, искусствоведение и

другие области. Особый акцент был сделан на важности междисциплинарного сотрудничества для дальнейшего развития арменоведения. Часть докладов публикуется в специальном выпуске журнала «История и культура». Хотя конференция не ставила целью дать исчерпывающие ответы, она послужила ценной площадкой для выявления отраслевых проблем и формирования путей развития арменоведения и образования в области истории.

* * *

Մուտք: Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որը Մայր բուհի հասակակիցն է, հպարտությամբ կրել և կրում է *«հիմնադիր ֆակուլտետ»* պատվավոր անունը:

Դյուրին չի եղել ֆակուլտետի անցած ուղին. Հայաստանի առաջին հանրապետության կարճ, բայց հագեցած շրջան, երբ համալսարան ունենալը մի խումբ նվիրյալների ջանքերով երազանքից դարձավ իրականություն; 1920-30-ական թթ., երբ տասնյակ դասախոսներ ենթարկվում էին հալածանքների, աքսորվում էին, բռնադատվում, պատերազմական տարիներ և շարունակ:

Եոպատերազմյան տարիները, չնայած համեմատաբար հանդարտ լինելուն, նույնպես հարթ չէին: Համակարգը «խորհրդային ժողովուրդ» կերտելու ճանապարհին պատմության կարիքն ուներ ու պատմաբանների աջակցությունը փորձում էր ապահովել հարկադրանքի, գաղափարախոսական ճնշման, քաղաքական օրակարգը գիտականի վերածելու ճանապարհով: Չնայած այս ամենին, ֆակուլտետը գիտության, ազգային դիմագծի պահպանության համար մղվող պայքարի առաջամարտիկների թվում էր. 1960-ական թթ, ազգային զարթոնքը կայացավ նաև համալսարանականների ու պատմաբանների ջանքերով:

Պատմության ֆակուլտետը նաև Արցախյան շարժման ակունքներում է: 1988 թվականին այստեղ էին ծնվում Շարժմանը նոր բովանդակություն ու ուղղվածություն հաղորդող բազմաթիվ նախաձեռնություններ ու գործողություններ: Ֆակուլտետը միայն խոսքով չէ, որ մասնակցում էր Շարժմանը: ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը, Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը, Վարդան Բախշյանը, Ռոմա Ավագյանը, Վարդան Դալլաքյանը, Զաքար Ավանեսյանը, ովքեր նահատակվեցին անկախության կայացման ճանապարհին, ֆակուլտետի շրջանավարտներ կամ ուսանողներ էին:

Ֆակուլտետի պատմության կարևոր փուլերից մեկն անկախության համար մղվող պայքարն էր, որ ի վերջո պսակվեց Հայաստանի Հանրապետության հռչակմամբ ու պետականության կայացման բարդ ու պատասխանատու գործընթացների սկզբնավորմամբ: Ֆակուլտետի շրջանավարտները այս տարիներին միայն գիտությամբ չէին զբաղվում: Նրանք քաղաքականությունում էին՝ «Ղարաբաղ կոմիտեից» մինչև Գերագույն խորհուրդ/Ազգային ժողով, կառավարություն, դիվանագիտական ծառայություն, այլ ոլորտներ:

2025 թ., երբ լրանում էր ֆակուլտետի հիմնադրման 105-ամյակը, ի թիվս այլ միջոցառումների, կարևոր համարեցինք միջազգային գիտաժողովի կազմակերպումը, հատկապես որ վերջին տարիներին ֆակուլտետում նմանատիպ միջոցառումներ շատ չեն կազմակերպվել:

Միջազգային գիտաժողովը կարևոր էր մեկ այլ տեսանկյունից ևս: Վերջին երկու տասնամյակի կրթական վերափոխումները, Բոլոնիայի գործընթացին Հայաստանի միանալը, ֆակուլտետում բակալավրի ու մագիստրոսի նոր կրթական ծրագրերի հիմնումն ու զարգացումը, կրթական ծրագրերի կառուցվածքային ու բովանդակային վերանայումները օրակարգային են դարձրել ակադեմիական ու կրթական միջավայրերի համատեղ քննարկումների խնդիրը: Մինչև գիտաժողովի կազմակերպումը իրականացված նախնական դիտարկումները ցույց տվեցին, որ կրթական ու գիտական միջավայրերի ինտեգրացիան բավարար չէ, ակադեմիական վերջին ուսումնասիրությունների արդյունքները երբեմն չեն ներառվում կրթական ծրագրերում, առկա է դասագրքերի ու կրթական ռեսուրսների բովանդակությունների վերանայման հարցը:

Մեծ հաշվով, այս ամենն ի վերջո հանգում է ընդհանրական, համակարգային խնդրի՝ հայագիտության և պատմագիտության, այդ թվում՝ պատմագիտական կրթության դիրքավորման հարցին: Պատմության ֆակուլտետը, որպես պատմագիտության, հնագիտության, ազգաբանության/մշակութային մարդաբանության, արվեստաբանության, կովկասագիտության ու մշակութաբանության ոլորտներում կրթական ծառայություններ մատուցող կառույց, առավել, քան երբևէ, կարիք ունի ծրագրերի վերանայման, տարածաշրջանային ու միջազգային հետազոտական տարածքում ինտեգրվելու, կրթական ծառայությունների բովանդակությունը նոր մարտահրավերներին համապատասխանեցնելու: Հաշվի առնենք նաև, որ արդի մարտահրավերներով պայմանավորված, աճում է պատմագիտության ու այլ գիտակարգերի կիրառական նշանակությունն ու կարևորությունը:

Միջազգային գիտաժողովի խորագիրը՝ «Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները», քննարկումների արդյունքում ընտրվեց այնպես, որ մի կողմից քննարկվեն հայագիտության զարգացման խնդիրներն ու հեռանկարները, մյուս կողմից՝ հաշվի առնվեն կրթական գործընթացների առանձնահատկություններն ու հիմնական հարցադրումները: Գիտաժողովը, նախաձեռնողների պատկերացմամբ, պետք է դառնար արածն ամփոփելու, ընդհանրացնելու ու միաժամանակ ապագա գործողությունները պլանավորելու յուրօրինակ հանգրվան:

Գիտաժողովին ներկայացված զեկուցումների թիվը շուրջ հարյուր էր, բավականին լայն աշխարհագրական ընդգրկմամբ՝ ՀՀ, Վրաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Իրան, Ռուսաստանի Դաշնություն, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա: Առանձին ժողովածուով զեկուցումները հրատարակելու առաջարկին արձագանքեց գիտաժողովի մասնակիցներից շուրջ երեսունը:

Գիտաժողովի զեկուցումները հրատարակվում են որպես Պատմության ֆակուլտետի «Պատմություն և մշակույթ» հանդեսի հատուկ թողարկում:

Հոդվածները վերաբերում են հայագիտության ամենատարբեր ոլորտներին՝ պատմություն, հնագիտություն, ազգաբանություն/մշակութային մարդաբանություն, արվեստաբանություն: Լայն է հոդվածների թեմատիկ ընդգրկումը. Ռուսաստանում հայագիտության զարգացման միտումներ (Հ. Հովհաննիսյան), հայ-ռուսական հարաբերություններ 20-րդ դարի սկզբին (Ա. Հայրունի), առանձին գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրություն (Ֆ. Մովսիսյան, Հ. Ամիրջանյան), խորհրդային շրջանի քաղաքականություն ու զարգացումներ (Ս. Ադամյան), հայագիտության և Հայաստանի Հանրապետության պատմության հիմնախնդիրներ (Գ. Խուդինյան, Է. Մինասյան):

Հայոց մշակույթի, ինքնության, հնագիտության, մարդաբանության ու արվեստաբանության բազմաթիվ հարցերին են վերաբերում համապատասխանաբար «Հնագիտություն», «Մշակութային մարդաբանություն/Արվեստաբանություն» բաժիններում ներառված հոդվածները:

«Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովը հնարավորություն տվեց արձանագրել նաև, որ հայագիտության առջև ծառացած գիտական խնդիրները չեն կարող լուծվել միայն մեկ գիտության ներկայացուցիչների ջանքերով և որ անհրաժեշտ է վերականգնել, խորացնել ու զարգացնել հայագիտության կարևոր որակներից մեկը՝ միջգիտակարգային համագործակցության տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթները: Բանասերների, բանագետների, միջազգային հարաբերությունների մասնագետների, լեզվաբանների ու աղբյուրագետների զեկուցումները, որ ներկայացվեցին գիտաժողովի ընթացքում, հենց ասվածի վկայությունն են: Մյուս կողմից՝ դրանք հստակ ուրվագծեցին այն հարցադրումները, որ վերաբերում են պատմագիտական կրթությանը: Այնպես

ինչպես գիտությունը չի կարող զարգանալ առանց միջգիտակարգային ուսումնասիրությունների, կրթությունն էլ չի կարող զարգանալ առանց կրթական ծրագրերի վերանայման, հարստացման, առանց պատմության փիլիսոփայության ու պատմության սոցիոլոգիայի, նոր ու ակտիվ զարգացող այլ գիտակարգերի ուսումնասիրությունների արդյունքների հաշվառման։

Այս տեսանկյունից ամփոփելով գիտաժողովի արդյունքները, կարող ենք արձանագրել, որ այն ծառայեց իր նպատակին ու հնարավորություն տվեց բարձրացնել հայագիտության, պատմագիտության ու բարձրագույն կրթության վերաբերյալ տարբեր հարցեր։

Բնական է, որ որպես առաջին քայլերից մեկը, ոչ՛ գիտաժողովը և ոչ՛ ներկայացվող ժողովածուն չեն հավակնում ամփոփ ու վերջնական արդյունքներ ներկայացնելուն։ Հանձնաժողովի կազմկոմիտեն, ինչպես նաև «Պատմություն և մշակույթ» հանդեսի հատուկ թողարկումը նախապատրաստած խումբը հայցում են ընթերցողի ներողամտությունը բացթողումների ու թերացումների համար։ Հուսով ենք, որ առաջիկա գիտաժողովների ժողովածուներից յուրաքանչյուր հաջորդը մեկ քայլ առաջ կլինի և բովանդակության և հարցադրումների և արդյունքների տեսանկյունից։

Եվ վերջում.

Շնորհակալություն են հայտնում գիտաժողովում զեկուցումներով հանդես եկած մեր գործընկերներին, ովքեր մեր հետ անցան Պատմության ֆակուլտետի 105-ամյակի ճանապարհի բավականին կարևոր հատվածը, հոդվածների հեղինակներին, ովքեր սիրով արձագանքեցին գրախոսների առաջարկություններին ու ամեն ինչ արեցին ժողովածուն ավելի լավը դարձնելու համար, գրախոսներին, ովքեր երբեմն երկու-երեք անգամ ընթերցեցին նույն հոդվածն ու հանդես եկան արժեքավոր առաջարկություններով։

Եվ գիտաժողովի կազմակերպումը և հոդվածների հրապարակումը պահանջում են թիմային աշխատանք։

Շնորհակալություն ենք հայտնում Գիտաժողովի կազմկոմիտեի անդամներին, ուսանող կամավորներին, որոնց ջանքը հնարավոր դարձրեց միջոցառման անցկացումը։

Երևանի պետական համալսարանի և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությունը հնարավոր դարձրին այն, ինչ ներկայացվում է ընթերցողին. մեր շնորհակալությունը այս երկու կառույցներին։

Առանձնահատուկ ուզում ենք նշել Պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար, պ. գ. թ., դոցենտ Հայկ Մխոյանի և գրասենյակի վարչարարության մասնագետ Տաթևիկ Հակոբյանի ջանքերը։

«Պատմություն և մշակույթ» հանդեսի այս հատուկ համարը հարգանքի ու երախտիքի տուրք է բոլոր այն պատմաբաններին, ովքեր արդեն 106 տարի շարունակ կերտում են ֆակուլտետի պատմությունը, ներկան ու ապագան։